Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

15 JAN 2010
05 FEB 2007
331.1
Ե-81

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՅԵՐԵՎԱՆԻ ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ

Ք 2001

ԵՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
бл. Библиотека
ՍՍՀ — ССРА
А. Мясник... на
...ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

6763-57

ԱՆ 1931

09 APR 2013
22813
(7790...)
2798-2...

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՐԵՎԱՆԻ ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ

### I. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴՖԻՆՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. *Սույն պայմանագիրը կնքվում է ...ի կողմից Յերեվանի Կարբիտ գոր...արանի գործարկոմի, վորը հետա...այում կոչվելու յե գործարկոմ, ...անձինս Սահակ Սահակյանի, համա...յն Լեռնագործների կենտվարչության . . . . . . . . . արձ. Նո . . վորով լիազորված է* 1931 *թ. պայմանագիրը կնքելու. իսկ մյուս կողմից Կարբիտ գործարանի, հանձինս գոր-`ծարանի կառավարիչ Սարգիս Իսրայելյանի, վորը կոչվելու յե տնտմարմին— ներքոհիշյալի մասին:*

2. Ելնելով տնտեսության [illegible] հիմնական խնդիրներից, ինչպիսին է՝ արդյունաբերության ինդուստրացման և սոցիալիստական վերակառուցման արագ թափի իրագործումը, որը անհրաժեշտ պայմանն է պրոլետարիատի գերիշխանության ամրապնդման և սոցիալիզմի հաջող կառուցմանը, ինչպես և բանվոր դասակարգի նյութական և կուլտուր կենցաղային դրության բարելավման համար, անամարմինը, գործարկամը, բանվոր-ծառայողները, նաև ճարտարագետ-տեխնիկական կազմը պարտավորվում են ձեռք առնել իրենցից կախված բոլոր միջոցները 1931 տարվա արդֆինպլանը կյանքում լըրիվ իրագործելու համար. միաժամանակ գործարկամն ու բանվորությունը պարտավորվում են կատարելու գործարանի 1931 թ. արտադրական պլանը, որով ծրագրված է արտադրելու 3000 տոնն կարբիտ, բարձրացնելով արտադրողականությունը 44,8 տոկոսի, աշխատավարձը ինքնահոս կերպով բարձրացնելու 4 տոկոս, և ինքնարժեքը իջեցնել 20 տոկոսով:

3. Ըստ առանձին ցեխերի հանդիպական պլանի այդ ցուցանիշները դասավորվում են հետևյալ կարգով՝

| | 1931 թվի արտադրանքը | Աշխատանքի արտադրողականութ. բարձրացումը | Աշխատավարձի բարձրացումը | Ինքնարժեքի իջեցում |
|---|---|---|---|---|
| Կաուչուկի ցեխ . . | 3086,4 տոննա | 52,5 տոկ. | 4,3 տոկ. | 24,3 տ. |
| Թիթեղագործների ցեխ . . . | 57372 բարար. | 39,5 » | 0,9 » | 4,2 » |
| Կրի ցեխ . . . . | 3428,3 տոննա | 9,7 » | 1,6 » | 29,3 » |
| Էլեքտրայի ցեխ . | 137,9 կլեք. | 36,1 » | 13,5 » | — — |

4. Տնամարմինը պարտավորվում է տանել սոցմրցման և հարվածայնության ճիշտ հաշվառումը և յուրաքանչյուր ամիս տալ նրանց արդյունքները, ինչպես յուրաքանչյուր ցեխում, նույնպես և անհատ բանվորների նկատմամբ:

5. Տնամարմինը պարտավորվում է արդֆինպլանը ժամանակին հասցնել ցեխերին և զավգյաշներին, հարկ յեղած դեպքում և անհատ բանվորներին, իսկ գործարկոմը պարտավորվում է այդ կիրառել կյանքում:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

6. Սույն պայմանագիրը տարածվում է տնամարմնում գոյություն ունեցող, կամ նոր կազմակերպվող հիմնարկներում, թե գրաված և թե նոր գործի անցնող աշխատավորների վրա:

Ծանոթություն.— 1. Սույն պայմանագիրը չի տարածվում վարձելու և աշխատանքից ազատելու իրավունքներով օժտված վարչական կազմի վրա:

Ծանոթություն.— 2. Տնտմարմինը մասնագետների հետ իր կողմից կնքված անհատական բոլոր պայմանագրերի պատճենները ներկայացնում է գործարկոմին, վոչ ուշ քան կնքման օրից յերեք օրվա ընթացքում:

7. Սույն պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակով և իր ուժի մեջ է մնում 1931 թ. հունվարի մեկից մինչև 1931 թ. դեկտեմբերի 31-ը:

8. Սույն պայմանագրի գործողության ընթացքում այն բանվորների և ծառայողների հետ, վորոնց վրա տարածվում է պայմանագ. 6-րդ կետը՝ չի թույլատրվում կնքել պայմանագրում նախատեսնված պայմանները



վատթարացնող վոչ մի անհատական համաձայնություն:

9. Գործարանի ռացիոնալիզացիայի, աշխատանքի բարձրացման և եժանացման հետևանքով արձակված բանվոր ծառայողներին տրվում է իրենց աշխատավարձի յերեք ամսվա միջին չափով մեկ ամսվա նպաստ:

Ծանոթություն.— Վարչությանը իրավունք է վերապահվում դադարի ժամանակ պարապ մնացած բանվորներին փոխադրել այլ համապատասխան աշխատանքների, բայց վորում վարձատրությունը տրվում է մինչև յերկու շաբաթվա միջին գտատումի չափով, իսկ յերկու շաբաթից հետո՝ տարիֆային դրույքով, կամ հատուկ գնահատմամբ (աշխ. օրենսգրքի 66-րդ հոդվ.). այդ աշխատանքները կատարելուց հրաժարվողները կարող են ար-

ձակվել աշխօրենսգրքի 36-րդ հոդվածով:

## III. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՅԵՎ ԱՐՁԱԿՈՒՄԸ

10. Բանվոր-ծառայողների ընդունման և արձակման խնդրում Տնտմարմինը պարտավորված է ղեկավարվել աշխատանքի օրենսգրքով: Աշխատանքի ընդունման ժամանակ հավասար վորակի դեպքում, տնտմարմինը առաջին հերթին ընդունում է պրոֆմիության անդամ գործազուրկներին Աշխբորսայի միջոցով: Տնտմարմինը իրավունք ունի մասնակցելու Աշխբորսայի կողմից աշխատավորներ ջոկելու և ուղարկելու գործին— Միության ժողկոմխորհի և Աշխժողկոմատի 9-ին հոկտ. 1929 թ. նո. 5-329 շրջաբերականի կարգով:



Ծանոթություն 1.—Վորակյալ բանվորներ և ծառայողներ Աշխբորսայում չլինելու դեպքում, Վարչությունը իրավունք ունի հրավիրելու դրսից:

Ծանոթություն 2.— Արհմիության գործազուրկ անդամներին են հավասարեցվում զորացրված կարմիր բանակայիններն ու հրամկազմը, բանվորների զավակները, վորոնք առաջին անգամն են առաջարկում իրենց աշխատանքները, խնամակալներից զրկված չափահաս սաները:

11. Ի լրումն Աշխօրենսգրքի 37, 44, 49, 88, 90 և 160-հոդվածների սահմանվում է հետևյալը՝

ա) Հաստիքների կամ արտադրության կրճատման դեպքում, առաջին հերթին հավասար վորակ ունեցողներից արձակվում են վոչ միության անդամները:

Ծանոթություն.— Վորակի հավասարությունը վորոշում է Վարչությունը. իսկ խնդրի շուրջը ծագած վեճերը լուծում է ԳԿՀ–ն:

բ) Ձեռնարկության կամ մասնակի լուծարքի, նաև արտադրական բնույթ կրող արտադրանքի ժամանակավոր կամ մեկ ամիս ավել ժամանակով կրճատման դեպքում արձակումը պետք է համաձայնեցնել գործարկոմի հետ:

Ծանոթություն.— 5– հոգուց վոչ պակաս հաստիքի կրճատման դեպքում Տնտմարմինը պարտավոր է վոչ ուշ քան յոթ որ առաջ տեղեկացնել այդ մասին գործարկոմին, հայտնելով նրան կրճատման յենթակա աշխատողների ցուցակը:

գ) Արհեստակցական, կուսակցական, կոոպերատիվ, Խորհրդային և



ապահովագրական կազմակերպություններում աշխատելու նպատակով ընտրված աշխատողներին իրավունք է վերապահվում վերադառնալու իրենց նախկին կամ համապատասխան պաշտոնի, ընտրովի պաշտոնից ազատվելուց մեկ ամսվա ընթացքում, ընդ վորում հիշյալ անձինք ձեռնարկությունից աշխատավարձ չեն ստանում ի բացառյալ Խորհրդային իշխանության կողմից այդ առթիվ հրապարակված հատուկ օրենքներում նախատեսնված դեպքերից:

դ) Ձեռնարկության մասնակի լուծարքը կամ հաստիքների կրճատումը չի տարածվում աշակերտների (բրոնիայի) նաև ուսուցման ժամկետը կեսը անցած գործուսի աշակերտների վրա, նախ քան աշակերտությունից անցնելը. կամ գործուսը ավարտելը, բացի օրենքով նախատեսնված դեպքերից:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

12. Գործարանի բանվորների և ծառայողների համար սահմանվում է 7-ժամյա բանվորական որ:

Ծանոթություն.— 1. Անընդհատ գործող արտադրության վրա աշխատող բանվորների համար, վորոնց աշխատանքը փաստորեն տեվում է ութը ժամ, 7-ժամյա բանվորական որը կիրառվում է գումարային հաշվով: Ավելորդ աշխատած ժամերի, ինչպես և ամեն տեսակի չսահմանված աշխատանքի դիմաց (գիշերային, արտաժամյա և այլն) մասնակ[illegible] յերկու շաբաթվա ընթացքում աշխատավորին տրվում է լրացուցիչ հանգստի որ, վորպես փոխհատուցում:

Ծանոթություն.— 2. Բանվորական որվա աշխատանքի ժամերը սահմանվում են ներքին կարգապահության կանոնադրությամբ:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Բանվորների, սպասարկու կրտսեր կազմի, աշակերտների և դեռահասների աշխատավարձի յուրաքանչյուր արհեստի համար սահմանվում է որավարձային դրույքների հաշվով:

Բանվորների և սպասարկու կրտսեր կազմի աշխատանքների նորմալ որվա համար առաջին կարգի տարիֆային որավարձի դրույքը սահմանվում է մեկ ռուբլի քսան կոպ. (1 ռ. 20կ.), անընդվորի հաշվով և կազմվում է հատ շաբաթի անցնելու դրույքները:

Մնացյալ կարգերի տարիֆային դրույքը սահմանվում է տասը կարգով և 1:3 հարաբերություն ունեցող տարիֆային ցանցի ներքոհիշյալ կոէֆիցիենտների համեմատությամբ:

| Կարգ | Կոեֆիցենտ | Դրույք | Դրույքը անընդհատ շաբաթվա ընթացքում ճիշտ | |
|---|---|---|---|---|
| | | | 7-ժ. աշխատանքային օրվա դեպքում | 6 ժամ աշխատող անձերի համար |
| 1. | 1,00 | 1—20 | 1—30 | 1—48 |
| 2. | 1,15 | 1—38 | 1—50 | 1—70 |
| 3. | 1,30 | 1—56 | 1—69 | 1—92 |
| 4. | 1,50 | 1—80 | 1—95 | 2—22 |
| 5. | 1,70 | 2—04 | 2—21 | 2—53 |
| 6. | 1,90 | 2—28 | 2—47 | 2—80 |
| 7. | 2,1 | 2—52 | 2—73 | 3—11 |
| 8. | 2,30 | 2—76 | 2—99 | 3—40 |
| 9. | 2,50 | 3—00 | 3—25 | 3—70 |
| 10. | 3,00 | 3—60 | 3—90 | 4—44 |

Գրասենյակային, հաշվային և տնտեսական կազմին պատկանող ծառայողների, ինչպես և տեխնիքական հսկողության կրտսեր կազմի ամսական օրացուցային բոլոր լի օրերի աշխատանքի համար առաջին կարգի ամսական դրույք է սահմանվում 36 ռ. 70 կ. մնացյալ կարգերի դրույքները սահմանվում են «14» կարգային 1:6 հարաբերություն ունեցող տարիֆային ցանցի հետեվյալ կոեֆիցենտի համեմատությամբ:

| Կարգ | Կոեֆիցենտ | Դրույք |
|---|---|---|
| 1. | 1,00 | 36 70 |
| 2; | 1,2 | 44 04 |
| 3. | 1,4 | 51 38 |
| 4. | 1,7 | 62 40 |
| 5. | 2.0 | 73 40 |
| 6. | 2,0 | 84 42 |
| 7. | 2,7 | 99 [illegible] |

Գոս. Հանրային Գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ—ССРА
2798-2007
(6263-57)

| Կ ա ր գ | Կոյեֆիցենտ | Դրույք |
|---|---|---|
| 8. | 3,1 | 113—78 |
| 9. | 3,5 | 128—45 |
| 10. | 4,6 | 146—80 |
| 11. | 4,5 | 165—15 |
| 12. | 5,0 | 183—50 |
| 13. | 5,5 | 201—65 |
| 14. | 6,0 | 220—20 |

Անհատական և խմբակային աշակերտության համար սահմանվում է տարիֆային հետևյալ ուսավարձային դրույքը՝

| Կարգ | Կոյեֆիցենտ | Դրույք | Դրույքը անընդհատ շաբաթի անցնելուց հետո |
|---|---|---|---|
| 1. | 1,0 | —70 | —76 |
| 2. | 1,2 | —84 | —91 |
| 3. | 1,5 | 1—05 | 1—14 |
| 4. | 1,8 | 1—26 | 1—36 |
| 5. | 2,2 | 1—55 | 1—69 |
| 6. | 2,5 | 1—75 | 1—92 |

14. Աշխատանքի և պաշտոնների տարաբաժանումը ըստ կարգերի կատարում է անամարմինը միության տարիֆային տեղեկագրի հիման վրա:

Ծանոթություն.— 1. Սույն տարիֆային տեղեկագրում չի նախատեսված արհեստը կամ մասնագիտությունը վերջիններիս տարաբաժանումները ըստ կարգերի կատարվում է անամարմնի կողմից և ներկայացվում է ԳԿՀ-ին ի հաստատություն:

Ծանոթություն.— 2. Վարչությանն իրավունք է վերապահվում առանձին պաշտոնների համար աշխատավարձ վճարել պայմանագրի մեջ հիշված տարիֆային ցանցից դուրս (ավելի) համաձայն Բանդյուղատեսչության և Ժողտնտխորհի նախագահության վորոշման:

15. Աշխատավարձի վճարումները

կատարվում է ամսեկան երկու նվագում. ամեն ամսի առաջին կիսամսյակին աշխատավարձը տրվում է նույն ամսի 20-ին. իսկ երկրորդ կիսամսյակը հաջորդ ամսի 5-ին:

## ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԸ

16. Աշխատավորների հանգստի ժամանակը սահմանված է «արտադրական անընդհատ շաբաթի» սկզբունքներով: Աշխօրենսգրքի 114-րդ հոդվ. կարգով. բոլոր աշխատավորները տարվա ընթացքում ազատվում են տասնյերկու բանվորական օրվա հերթական արձակուրդով, ավելացնելով այն հանգստի և տոն օրերը, որոնք ընդգրկվում են արձակուրդի ժամանակաշրջանում:

Ծանոթություն.—1. Արձակուրդը տրվում է օրացուցային տարվա ընթացքում, ըստ հնարավորության ամառվա ամիսներին և



միանվագ, առանց տարբեր ժամանակ ընդհատ կբաժանելու:

Ծանոթություն.—2. Այն դեռահասները, որոնց 18 տարին դեռ չի լրացել 5 և $1/_2$ ամիս աշխատելուց հետո, մեկ ամսվա արձակուրդի իրավունք են ստանում:

Ծանոթություն.— 3. Արձակուրդի կարգը և հերթը նշանակում է Վարչությունը ու ներկայացնում Գ. Կ. Հ-ին ի հաստատություն:

Ծանոթություն.— 4. Աշխատավորի արձակման դեպքում Վարչությունը իրավունք չունի նրա աշխատավարձից իր ժամանակին չտրամադրած արձակուրդի փոխարեն, որևէ պահումներ անելու, անկախ այն ժամանակամիջոցից թե աշխատավորը որքան ժամանակ է աշխատել:

Ծանոթություն.—5. Հանգստի տուն ուղարկվող բանվոր-ծառայողները արձակուրդները ստանում են ԳԿՀ-ի կողմից սահմանված հերթից դուրս, այն ժամանակ, յեթե սոցապմարմինների կողմից տրվում է համապատասխան առաջարկություն:

17. Հատկապես վնասակար տեղ աշխատող բանվորներին տրվում է տարվա ընթացքում լրացուցիչ արձակուրդ, համաձայն պայմանագրին կցված ցուցակի:

18. Յեթե արձակուրդով օգտվելու համար աշխատավորին անհրաժեշտ է ձեռնարկության սահմաններից մեկնել, յերթևեկության համար տրվում է մինչև հինգ օր ժամանակ, վորը արձակուրդի մեջ չի մտնում և վարձատրման յենթակա չէ:

Վարչության իրավունք է վերապահվում արձակուրդից ավելի քան



5 օրից ուշ վերադարձողներին աշխատանքից հեռացնել, յեթե վերադարձին չներկայացնի արդարեցուցիչ փաստաթուղթ:

Ծանոթություն.— Արձակուրդից օգտվելու նպատակով Հայաստանի սահմաններից դուրս մեկնող աշխատավորը պարտավոր է այդ մասին գրավոր դիմում ներկայացնելու Վարչությանը, նշելով մեկնելու վայրը և յերթևեկության համար 5 օրվա սահմաններում անհրաժեշտ ժամանակը: Այդպիսին թույլատրվում է Վարչության կողմից գործարկոմի հետ միասին:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

19. Մասնահագուստի և կոշիկների մաշվելու ժամկետի մեջ չի մտնում բանվորների հիվանդության, արձակուրդի և գործալքումների (պրոգուլների) ժամանակը:

20. Վտանգավոր ցեխերում աշխատող բանվորները և վարչա-տեխնիկական կազմը հիմնարկության հաշվին ստանում են արտանունդ օրեկան կես լիտր կաթ, ըստ պայմանագրին կցվող ցուցակի:

Ծանոթութ. — 1. Այն դեպքում երբ կաթ տալը հնարավոր չէ՝ փոխարինվում է յուղով (կարագ):

Ծանոթություն. — 2. Աշխատանքի վայրում դժբախտ պատահարներից մահացած բանվոր-ծառայողների, վարչա-տեխնիքական կազմի ընտանիքներին Գործարանի Վարչությունը բաց է թողնում մահացածի միջին աշխատավարձի մեկ ամսվա չափով նպաստ:

21. Այն բանվոր-ծառայողներին, որոնք զբաղված են հագուստները շուտ մաշեցնող հատկապես վնասակար աշխատանքներում, տրվում է



պաշտպանողական հագուստ և ոտնամաններ ըստ պայմանագրին կցված ցուցակին:

Ծանոթություն. — Տնտմարմինը պարտավոր է իր հաշվին կատարել ոտնամանների վերանորոգումը մեկ անգամ ամբողջ ժամանակաշրջանում:

22. Տնտմարմինը պարտավոր է յուրաքանչյուր բանվորին տալ մեկ յերեսսրբիչ վեց ամիսը մեկ անգամ և ամիսը 400 գրամ օճառ արտահագուստը լվանալու համար:

Ծանոթություն. — Տնտմարմինը պարտավորվում է բանվոր-ծառայողներին տալ ամսեկան մեկ քառորդ ֆունտ օճառ ձեռքերը լվանալու համար:

23. Տնտմարմինը պարտավորվում է մինչև բաղնիքի կառուցումն իր հաշվին շաբաթական մեկ անգամ բանվորներին բավարարել բաղնիքի տոմսերով:

24. Աշխատավայրում գոյություն ունեցող լվացարանները, ջրի տակառները և այլն տնտմարմնի կողմից պետք է պահպանվեն մաքուր, պիտանի դրության մեջ:

25. Տնտմարմինը պարտավորվում է տրամադրել բանվորներին կահավորված շենք ճաշելու և թեյելու համար ու վերջինիս համար պահարան, դագգյան և սառցանոցի արկղ:

## ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

26. Տնտմարմինը պարտավորվում է աշխատող բանվորների ընդհանուր թվի 3 տոկոսի չափով պահել անչափահասներ (աշակերտներ):

27. Հաստիքների կրճատման դեպքում բրոնիայի մինչ կրճատման յեղած թիվը չի յենթարկվում փոփոխության: Ուսուցման յերրորդ տարում աշակերտները և աշակերտության շրջանը չանցած անչափահասները հաստիքների կրճատման պատճառով ազատվել չեն կարող:



28. Աշակերտության ժամկետը համաձայն ուսուցվող արհեստի բարդության և ուսուցման ձևի՝ արտադրության ընթացքում ուսումն անցնելու համար սահմանվում է յերկու տարի:

Ծանոթություն 1.— Աշակերտի փոխադրումը մի արհեստից մյուսը չի թույլատրվում:

Ծանոթություն 2.—Մի ձեռնարկից մյուսը նույն արհեստին փոխադրվող աշակերտը պահպանում է իր աշակերտական ստաժը:

Ծանոթություն 3.— Աշակերտության վորակը քննություն է սահմանվում վեց ամիսը մեկ անգամ տնտմարմնի, գործարկոմի և ԼԿՅԵՄ-ի տեղական բջիջի հավասար ներկայացուցիչներից

կազմված հատուկ հանձնաժողո-
վի կողմից։

29. Բոլոր աշակերտների աշխատանքի հաշվումը կատարվում է ըստ նրանց տարիֆային դրույքով անկախ կրճատ ժամերից։

30. Գործարքային աշխատանքներ անչափահասներին չի տրվում, բացառիկ դեպքերում գործարքային աշխատանք կարելի յե տալ միության համաձայնությամբ։

31. Գործարքային աշխատանքների մեջ գրավված անչափահասները և աշակերտները վարձատրվում են ընդհանուր գործող գործարքային գնահատումով, լրացուցիչ վարձատրության կրճատ բանվորական օրվա համար տարիֆային կարգով։

32. Այն աշակերտները, որոնք աշխատում են գործարքով աշխատող բանվորների հետ, նրանց գատումից ստանում են տոկոսներ հետևյալ չափով՝



ա) 1-ին կարգից մինչև 3-րդ կարգը ոչինչ չի ստանում։

բ) 4-րդ կարգի աշակերտները ստանում են 5 տոկոս։

գ) 5-րդ կարգի աշակերտները ստանում են 10 տոկոս։

դ) 6-րդ կարգի աշակերտները ստանում են 15 տոկոս։

33. Վարչությունը պարտավորվում է բանվորներին և յերիտասարդությանը տալու փորձնական աշխատանք (պրոբ) անկախ նրանից, թե կա՞ այդ կարգի համար բարձր տեղ թե ոչ, որից հետո փորձնական աշխատանքը տրված բանվորին տրվում է տեղեկանք, թե ինչի համար է տրվել պրոբը. Հետագայում ազատված տեղերում հերթականությամբ տեղավորել այդպիսիներին։

34. Ձեռնարկում փորձակյալ բանվորների տեղերը ազատվելու դեպքում առաջադրվում են փորձակյալ

անչափահասներին, վորոնք պատրաստված են տվյալ աշխատանքի համար:

35. Ձեռնարկություններում զանազան տեսակի օժանդակ աշխատանքների, ինչպես և չվորակավորված աշխատանքների անցնող դեռահասները վարձատրվում են բանվորների հետ հավասար չափով, ստանալով վարձատրություն և կրճատ ժամերի համար:

Ծանոթություն.— Հասակավոր բանվորների հետ հավասար վորակի և միանման աշխատանք կատարող դեռահաս աշակերտները պետք է վարձատրվեն համահավասար չափով, անկախ բանվորական ժամերից:

36. Դեռահաս աշակերտներին հասնող արձակուրդը պետք է տրամադրել մայիսի մեկից մինչև հոկտեմբերի մեկը, ըստ վորում ձեռնարկությունները պարտավոր են արձակուրդները տրամադրել միաժամանակ, չբաժանելով մի քանի ժամկետների:



## ԳՈՐԾԱՐՔ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆԵՐ

37. Վոչ գործարքային աշխատանք թույլատրվում է այն աշխատանքներում, վորոնք դժվար են նորմիրովկայի յենթարկվում: Այն վորակյալ բանվորները, վորոնք կատարում են այնպիսի աշխատանքներ, վորպիսին հնարավոր չէ նորմիրովկայի յենթարկել, ինչպես և գործարանի և համքյարություններին օժանդակող բանվորները, վորոնք իրենց աշխատանքով օժանդակում և նպաստում են գործարքային աշխատանքներին (յեթե այդպիսիները չեն աշխատում գործարքով), ստանում են իրենց տարիֆային դրույքին գումարած

գործարքային բրիգադայի կամ համ-քյուրության միջին դասումից (արե-մխայից) վորոշ տոկոս, վորի չափը սահմանվում է առանձին ԳԿՀ-ի կող-մից:

38. Պայմանագրում նախատեսված աշխատավարձով բանվորը պարտավորվում է լրիվ կատարել սահմանված մշակման նորմաները, ընդ վորում կատարած աշխատանքի վորակը պետք է համապատասխանի տեխնիկական պայմաններին:

Սահմանված մշակման նորմաներն աշխատանքի նորմալ պայմաններում, իր մեղքով չկատարելու դեպքում բանվորն առաջին անգամ աշխատա-վարձն ստանում է իր կատարած աշ-խատանքի քանակի համեմատ, բայց համենայն դեպս վոչ պակաս իր տա-րիֆային դրույքի 2/3 մասից. յերկ-րորդ անգամ իջեցվում է ստորին կարգի և յերրորդ անգամ արձակվում



է, բոլոր դեպքերում ել ԳԿՀ-ի վո-րոշումով:

Ծանոթություն.— Արտադրու-թյան բնույթի պատճառով մը-շակման նորմաները չկատարե-լու դեպքում (նյութերի վոչ հա-մապատասխան վորակը, իր ժա-մանակին նյութերն աշխատանքի վայրը չհասցնելը, գործիքների վատ վորակը) բանվորներին վե-րապահվում է միջին դասում:

39. Բացի պրեմիալ վարձատրու-թյունից չափավորման յենթարկվող բոլոր աշխատանքներում գործադր-վում է նաև պարգեվային վարձա-տրման սիստեմը, աշխատանքի ըն-թացքում բանվորի կողմից ձեռք բե-րած զանազան տեսակի նվաճումների համար, վորպիսի սիստեմները հաս-տատվում են ԳԿՀ-ի կողմից:

40. Գործարքային նորմաները մը-շակում է տնտմարմինը, փակցնում է

ձեռնարկության աչքի ընկնող տեղերում, բանվորներին իրազեկ դարձնելու համար: Այն նորմաները, վորոնք սահմանվում են վոչ խրոնոմետրաժի միջոցով, հայտարարությունից յերեք որ հետո ներկայացվում են ԳԿՀ-ին ի հաստատություն: ԳԿՀ-ի կողմից սահմանված նորմաները կոմբեչի համար պարտադիր և դառնում և կիրառվում է կյանքում:

Ծանոթություն.— Խրոնոմետրաժի միջոցով սահմանված արտադրական նորմաները յենթակա չեն ԳԿՀ-ի հաստատման, իսկ գնահատումները հաստատվում են ԳԿՀ-ի կողմից:

41. Հատավարձ և գործարքային վարձահատուցումները հաշվարկվում են հետևյալ ձևով՝

ա) Աշխատանքի (աշխատողի-կատարողի) տարիֆային դրույքին գումարվում է աշխատանքի



տվյալ կարգի նորմայից դուրս, հավելյալ աշխատանքի համար սահմանված հատուցման տոկոսը և բաժանվում է աշխատանքի այն չափի վրա, վորն ընդունված է, վորպես գործարքային նորմա: Բաժանումից ստացված նորմաները ներկայացնում են իրենցից գործարքային գնահատում, ըստ վորում գործարքային գնահատման չափն անկախ աշխատանքի կատարման ժամանակից (ցերեկ, գիշեր, արտաժամյա չի փոխհատուցվում:

բ) Գործարքային գնահատման չափը կարելի յե վորոշել նաև ժամերի վերածված նորման բազմապատկելով աշխատանքի գործարքային ժամի արժեքի վրա (աշխատանքի կարգերի տարիֆային դրույքը գումարած հավելյալ աշխատանքի հատուցման տոկոսը):

42. Գործարանում սահմանվում է աշխատանքի վարձահատուցման հետևյալ ձևերը՝ սահմանափակված գործարքային պարզ սիստեմ և պրեմիայի (պարգևատրման)— ձևը:

43. Մշակման նորմաները կիրառվում են մեկ տարի ժամանակով, սակայն յեթե խրոնոմետրաժի կամ այլ միջոցներով կհաստատվի նորմաների սխալ լինելը, կամ յեթե գործարանի վորևե բաժնում կանցկացվեն արտադրական պայմանները բարելավող կազմակերպչական և տեխնիքական փոփոխություններ, մշակման նորմաներն ըստ այնմ պետք է վերանայվեն և ուղղվեն:

Ծանոթություն 1.—Մշակման նորմաների վերանայումը պետք է ապահովի ծրագրով նախատեսված աշխատանքի, արտադրականության բարձրացումը և արդֆինպլանի իրականացումը:



Ծանոթություն 2.— Գործարքային նորմաները կարող են փոխվել միութենական մարմինների համաձայնությամբ:

Ծանոթություն 3.—Վերանայված մշակման նորմաներն ուժի մեջ են մտնում սույն պայմանագրի 40-րդ հոդվածի կարգով, նրանց հաստատումը ԳԿՀ-ի կողմից անհրաժեշտ չէ:

44. Մշակման նորմաները և գործարքային գնահատումների վերաբերյալ բոլոր անբավականությունները յենթակա յեն ԳԿՀ-ի լուծման և մինչև կոնֆլիկտների քննությունը ԳԿՀ-ում. աշխատողն իրեն համաձայնած աշխատանքից չի կարող հրաժարվել, յեթե նույնիսկ նա համաձայն չի լինել իրեն հայտարարած գնահատման (կամ մշակման նորմաների հետ): Նախ քան կոնֆլիկտի լուծումը ԳԿՀ-ում բանվորնե-

րի կողմից պատրաստված տարրկա-ների համար վարձատրությունը տրվում է ԳԿՀ-ի կողմից սահման-ված նորմաներով:

## ԲՐԱԿ

45. Բանվորից կախված պատճառներով առաջացած բրակի վրա գործադրված աշխատանքը չի վարձատրվում. բոլոր դեպքերում յեթե բրակը գոյացել է վոչ բանվորի մեղքով, այդ դեպքում բրակի վրա գործադրված աշխատանքը վարձատրվում է նրա միջին աշխատավարձի չափով:

Ծանոթություն.— Բանվորը բրակը նկատելու դեպքում պարտավոր է անմիջապես հայտնելու Վարչությանը, չհայտնելու դեպքում բրակի վրա գործադրված աշխատանքը չի վարձատրվում:



## ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

46. Բանվորների վորակավորման և վերավորակավորման համար ընտամարմինը պարտավորվում է բաց անել յերկու ամսյա կուրսեր 20 բանվորների համար, կապելով կուրսերը արտադրության հետ:

## ԴԱԴԱՐ ՑԵՎ ԱՐՏԱԺԱՄՅԱ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

47. Բանվորի մեղքով առաջացած դադարի համար վարձատրություն չի տրվում. նման դադարների անտակը կազմում է միությունն և Վարչության կողմից ու կախվում ցեխերի աչքի ընկնող տեղերում:

48. Գործարքով աշխատողները, նաև վոչ գործարքով օրավարձով աշխատողները, վորոնք ստանում են պրեմիա, արտաժամյա աշխատանք կատարելիս վարձատրվում են հետևյալ ձևով՝ գործարքային դա-

տումին կամ դաստումին պրեմիայի հետ միասին միացվում է հավելում՝ առաջին յերկու ժամվա ընթացքում, յուրաքանչյուր աշխատած ժամի համար՝ կես ժամվա տարիֆային դրույքի, իսկ հետագա ժամերից յուրաքանչյուր ժամերի համար—մեկ ժամվա տարիֆային դրույքի չափով:

49. Գործարանի առանձին ցեխերի դադարի (պրոստոյ) դեպքում բանվորներին աշխատավարձը տրվում է հետեվյալ ձեվով՝

ա) մեկ օրից մինչև յերեք օր ընդհանուր առմամբ դադարի դեպքում վճարումը կատարվում է տվյալ ամսի միջին աշխատավարձի չափով:

բ) 3-ից մինչև 12 օր դադարի դեպքում վճարումը կատարվում է նախորդ մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով:

գ) մինչև 12 օր և բարձր օրերի



համար վճարումը կատարվում է նախորդ յերեք ամսվա միջին աշխատավարձի չափով:

## ՃՏԱ

50. Ճարտարապետա-տեխնիկների տնտեսավարական կամ արտադրական սխալ անելու մեջ մեղադրելու դեպքում, ՃՏԱ-ին իրավունք է տրվում նշանակելու պատասխանատու եքսպերտիզիա:

51. Ճարտարապետա-տեխնիկական և նրանց կարգին պատկանող աշխատակիցներին տրվում է արձակուրդ ըստ պայմանագրին կցված ցուցակի:

52. Տնտմարմինը պարտավորվում է մշակել ճարտարատեխնիկական կազմի պարգևատրման սիստեմը իրական նվաճումների և կատարելագործումների համար, վորոնք վորոշ տնտեսում են տալիս: Պարգևատրման կարգը սահմանվում է

ըստ Միութենական ժողկոմխորհի 18-ն հոկտեմբերի 1929 թ. վորոշման և հաստատված է ԳԿՀ-ի կողմից:

53. Ճարտարա-տեխնիկական աշխատավորն իրավունք չունի առանց Վարչության համաձայնության զուգավար պաշտոններ առնելու:

54. Բոլոր ճարտարապետա-տեխնիկական կազմի և նրանց կարգին պատկանող աշխատակիցների ամսվա օրացուցային բոլոր յի օրերի աշխատանքի համար առաջին կարգի ամսեկան դրույք է սահմանվում 90 ռուբլի: Մնացյալ կարգերի դրույքները սահմանվում են 16 կարգանոց 1:4 հարաբերության ունեցող տարիֆային ցանցի հետևյալ կոեֆիցիենտների համեմատությամբ:



| Կարգ | Կոյե-ֆի-ցենտ | Դրույք | Կարգ | Կոյե-ֆի-ցենտ | Դրույք |
|---|---|---|---|---|---|
| 1 | 1,0 | 90— | 9 | 2,1 | 189— |
| 2 | 1,1 | 99— | 10 | 2,3 | 207— |
| 3 | 1,2 | 108— | 11 | 2,5 | 235 |
| 4 | 1,3 | 112— | 12 | 2,2 | 252— |
| 5 | 1,4 | 126— | 13 | 3,1 | 279— |
| 6 | 1,5 | 135 | 14 | 3,4 | 306— |
| 7 | 1,7 | 153 | 15 | 3,7 | 330— |
| 8 | 1,9 | 171 | 16 | 4,9 | 360— |

## ԿՈՄՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

55. Տնամարմինն իր տրամադրության տակ ունեցած և Աշխժողկոմատի կողմից սահմանված սանիտարական, առողջապահական պահանջներին համապատասխանող բնակարաններ տրամադրում է բանվորներին ԽՍՀՄ ԺՏԳԽ-ի և ՀԱՄԿԽ-ի կողմից կոմմունալ գրությունների վերաբերյալ ու տրված հրահանգների համաձայն: Տնամարմինը տալիս է բնակա-

բաններ բանվոր–ծառայողներին իր տրամադրություն տալ ունեցած տներում, համաձայն ԱՍՖԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1929 թ. հուլիսի 22-ի վորոշման և այդ վորոշումը կիրառելու համար պատշաճ ինտրուկցիայի, նաև կատարել այդ տըներում անհրաժեշտ վերանորոգում ղեկավարվելով վերոհիշյալ ինստրուկցիայով:

56. Տնտմարմինը պարտավոր է տրամադրել փոխադրական միջոց քաղաքից գործարան և գործարանից քաղաք բանվոր–ծառայողների համար:

## ՅԵՐԱՇԽԻՔՆԵՐ ՅԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

57. Յեթե աշխատավորի աշխատանքը չկատարելը տեղի յե ունեցել նրանից անկախ պատճառներով և տևել է մինչև 3 որ, աշխատավարձը



վճարվում է նրա որեկան միջինի աշխատավարձի հաշվով, իսկ 3 որից ավելի տևողություն ունեցող դեպքում վարձատրվում է տարիֆային դրույքի չափով: Հատուցումը տըրվում է միայն լի որերի համար և միմիայն այն աշխատավորներին, վորոնք դադարին ներկա յեն յեղել աշխատանքի վայրում:

58. Մահացածների ընտանիքները և Աշխորենսգրքի 47-րդ հոդվ. Ա և Բ կետերի հիմունքներով արձակված գործազուրկ բանվորները բնակարանով ոգտվում են ձրի:

## ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

59. Բանվորների և ծառայողներ
հարաբերությունն արտադրությ
հետ աշխատանքների սկսվելու և ա
վարտվելու ժամերը, ընդմիջումնե
րի, հանգստյան և կերակուր ընդմ

նելու ժամերը, գործիքներով ապահովե-
լու կարգը, դժբախտ պատահարների
դեմ ձեռնարկվելիք նախազգուշաց-
ման միջոցները, տուգանման միջոց-
ները և այլն սահմանվում են ներքին
կանոնադրության կանոններով:

60. Տնտմարմինը պարտավորվում
է մեկ ամսվա ընթացքում մշակել
ներքին կանոնադրությունը, հարմա-
րեցնելով այդ անընդհատ շաբաթվա
անցնելու հետ և ներկայացնելու
ԳԿՀ-ին ու Աշխտեսչությանը ի հաս-
տատություն, վորից հետո տպագրել
տալ և փակցնել գործարանի աչքի
ընկնող տեղերում:

## ԿՈՒԼՏ ԱՇԽԱՏԱՆՔ

61. Միության ամբողջ կուլտ աշ-
խատանքների համար տնտմարմինը
հատկացնում է բանվորների-ծառա-
յողների ամբողջ աշխատավարձի մեկ
տոկոսը, վորը և հանձնվում է աշխա-
տավարձի վճարման ժամին:



62. Բացի կուլտ հատկացումից,
տնտմարմինը պարտավոր է իր հաշ-
վին կատարել ակումբների և գրա-
դարանների (վորոնց շենքերը պատ-
կանում են Վարչությանը) ընթացիկ
նորոգումներ և յեթե նրանք գտնվում
են ձեռնարկության սահմաններում
մատակարարել հարկավոր քանակի
ելեքտրական և ջերմացման միջոցնե-
րով:

63. Տնտմարմինը պարտավորվում
է հնարավորության չափով տրամա-
դրել լիկկայանի համար շենք:

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐ

64. Ձեռնարկությունների միու-
թենական մարմինների պահպանման
միջոցները բաց է թողնում տնտմար-
մինը բանվորների և ծառայողների
աշխատավարձի մեկ և քառորդ տո-
կոսի չափով, վորը հանձնվում է
գործարկոմին աշխատավարձի վճար-
ման պահին:

## ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

65. Վարչությունը իրավունք է վերապահում միության հետ համաձայնության գալով և ԳԿՀ-ի վորոշմամբ սահմանել կամ փոփոխել առանձին ցեխերի պրեմիայի չափը:

66. Վարչությունը պարտավորվում է փակ բաշխիչի համար պատրաստել մեկ տախտակյա կրպակ, յեթե Բանկոոպի Վարչության համաձայնությամբ կարելի կլինի Հայպետշինի հետ ունեցած կրպակից առանձնանալու:

67. Վարչությունը պարտավորվում է պայմանագիրն իր բոլոր կցումներով տպագրել գրքույկների ձևով 75 որինակ և բաժանել բոլոր բանվոր-ծառայողներին:

68. Տնամարմինը պարտավորվում է իր հաշվին տպագրելու բավարար քանակությամբ, գործարանում աչքի ընկնող տեղերում սույն պայմանագիրը փակցնելու համար:



69. Սույն պայմանագիրն ունի հետևյալ կցումները՝

1. Ցուցակ լրացուցիչ արձակուրդ ստացողների.
2. Ցուցակ մասնագիտական հագուստ ստացողների.
3. Ցուցակ արտոնունք ստացողների.
4. Ցուցակ պաշտոնների և տարիֆային կարգերի:

ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ
ԳՈՐԾԱՐԿՈՄ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

## ՑՈՒՑԱԿ

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏԻ

1. Բարձողներ, ողնականներ մուրճահարներ.
   - ա) Արտահագուստ բրեզենտից 6 ամիս
   - բ) Մեկ զույգ կոշիկ կրկնակի ներբաններով 6 ամիս
   - գ) Կաշվե ձեռնոցներ ըստ կարիքի
   - դ) Գունավոր ակնոցներ ըստ կարիքի
   - ե) Գլխարկ 9 ամիս
2. Մեքենավարներ.
   - ա) Արտահագուստ թեթև կտորից 10 ամիս
   - բ) Կոշիկներ ունենալ ցեխամ մեկ զույգ



3. Տեղակայորդ և կարբիտ ջարդողներ.
   - ա) Արտահագուստ թեթև կտորից 9 ամիս
   - բ) Կաշվե գոգնոց 9 ամիս
   - գ) Ակնոցներ և դիմակներ ըստ կարիքի
   - դ) Կոշիկներ 6 ամիս
4. Կոքս և կրի վրա աշխատող ու մատակարարող բանվորներ.
   - ա) Արտահագուստ թեթև կտորից 9 ամիս
   - բ) Կոշիկներ կրկնակի ներբաններով 9 ամիս
   - գ) Բրեզենտե ձեռնոցներ ըստ կարիքի
   - դ) Ակնոցներ և դիմակներ ըստ կարիքի
5. Երեքարատ պատրաստող բանվորներ.
   - ա) Մասնագիտական հագուստ թեթև կտորից 9 ամիս

բ) Կոշիկներ կրկնակի ներբան-
ներով 9 ամի

գ) Կաշվե ձեռնոցներ ըստ
կարիքի

6. Կրի վառարանի վրա աշխատող
բանվորներին.

ա) Արտահագուստ բրեզենտից 6 ամի

բ) Կոշիկներ կրկնակի ներբան-
ներով 6 ամի

գ) Կաշվե ձեռնոցներ ը
կարիքի

դ) Ակնոցներ և գլխարկներ ը
կարիքի

7. Թիթեղագործներ.

ա) Արտահագուստ թեթև կտ
րից 9 ամ

բ) Գոգնոցներ բրեզենտից 9 ամ

գ) Կաշվե գոգնոց 9 ամ

8. Ելեքտրոդի շապիկ պատրա
ստողներ.



ա) Արտահագուստ թեթև կտո-
րից 9 ամիս

բ) Կաշվե ձեռնոցներ ըստ
կարիքի

գ) Ցեխում ունենալ կո-
շիկ. միայն հագնել տաք
աշխատանքներում

դ) Կաշվե գոգնոց 9 ամիս

9. Ատաղձագործներին և հյուսնե-
րին.

ա) Արտահագուստ թեթև կտո-
րից 9 ամիս

բ) Գոգնոցներ բրեզենտից 9 ամիս

10. Պահեստի բանվորներին.

ա) Արտահագուստ թեթև կտո-
րից 9 ամիս

բ) Կոշիկներ կրկնակի ներբան-
ներով 9 ամիս

գ) Կաշվե գոգնոց 6 ամիս

դ) Ձեռնոց ըստ կարիքի

11. Ելեքտրոմոնտյորին և իր աշա-
կերտին.

ա) Արտահագուստ թեթև կտորից 9 ամիս

բ) Գուլպաներ ունենալ ցեխում

գ) Ձեռնոցներ ունենալ ցեխում

12. Սեվագործ բանվորներ.

ա) Կոշիկներ 9 ամիս

բ) Ձեռնոցներ ըստ կարիքի

գ) Ակնոցներ և գլխարկներ ըստ կարիքի

դ) Արտահագուստ ըրեզենտից 9 ամիս

13. Գրասենյակի մաքրողին և էքսպեդիտորին.

ա) Աշխատողական կողմից սահմանված նորմաներով

14. Մեքենագրուհուն

Թեթև կտորից մեկ խալաթ 1 տարի

15. Լաբորանտին.

Մեկ խալաթ 1 տարի

Ծանոթություն.— Բանվորից անկախ պատճառով, յեթե արտահագուստը վառվել է կամ ձեղքվել է արտադրության մեջ, այդ դեպքում կամ վերանորոգվում է կամ փոխարինվում է նորով:



ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՐԿՈՄ՝ Ս. ՄԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

## ՑՈՒՑԱԿ

Կարբիտ գործարանի բանվորների և վարչա-տեխնիկական կազմի, վորոնք ստանում են օրեկան կես լիտր կաթ:

1. Բարձողներ.
2. Ոգնականներ.
3. Մուրճահարներ.
4. Կարբիտ ջարդողներ.

5. Էլեքտրոդ լցնողներ.
6. Կիր ջարդողներ.
7. Գլխավոր վարպետ.
8. Բրոյերի վրա աշխատողներ.

ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ
ԳՈՐԾԱՐԿՈՄ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

## Ց Ո Ւ Ց Ա Կ

Կարբիտ գործարանի այն բանվոր-ծառայողների, վորոնք ստանում են լրացուցիչ արձակուրդ:

1. Բարձողներ 2 շաբաթ
2. Ոգնականներ 2 շաբաթ
3. Մուրճահարներ 2 շաբաթ
4. Կարբիտ ջարդողներ 2 շաբաթ
5. Էլեքտրոդ պատրաստող և ֆոր-մաները լցնողներ 2 շաբաթ
6. Կիր ջարդողներ մեկ շաբաթ



7. Կրի վրա աշխատող բոլոր բան-վորներին մեկ շաբաթ
8. Բրոյերի վրա աշխատող բոլոր բանվորներին մեկ շաբաթ
9. Կոկս մատակարարող բանվոր-ներին 1 շաբաթ
10. Պահեստի բոլոր բանվորներին մեկ շաբաթ
11. Տեխ. ղեկավար—2 շաբաթ
12. Գլխ. հաշվապահ 2 շաբաթ
13. Հաշվապահ 2 շաբաթ
14. Սարաժնի վարիչ 2 շաբաթ
15. Պլանավիկ 2 շաբաթ
16. Գլխ. վարպետ 2 շաբաթ
17. Նորմիրովշչիկ 2 շաբաթ
18. Եքսպեդիտոր մեկ շաբաթ
19. Մեքենագրուհի մեկ շաբաթ
20. Տեխնիկ մեկ շաբաթ
21. Լաբորանտ մեկ շաբաթ

Ծանոթություն 1.—Ցեթե 1931 թ. թիթեղագործների ցեխը կմնա իր նախկին տեղում, նրանց

և ոչ թե մեկ չարաթվա լրացուցիչ արձակուրդ աշխատանքի տեղը վտանգավոր լինելու պատճառով. իսկ յեթե այդ ցեխը կաեգափոխիլլի համապատասխան տեղ լրացուցիչ արձակուրդ չի տրվում:

Ծանոթություն 2.—Յեթե ապագայում գործի ընթացքում կպարզվի, որ փականագործի աշխատանքները կապված նոր երեքարանների հետ բարդանում են, հետագայում ԳԿՀ-ի նիստում քննության առնել փականագործին լրացուցիչ արձակուրդ տալու խնդիրը:

ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ
ԳՈՐԾԱՐԿՈՄ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ԽՍՐԱՑԵԼՅԱՆ



# ՑՈՒՑԱԿ

Կարբիտ գործարանի պաշտոնների և տարիֆային կարգերի.

1. Բարձողներ 7–8 կարգ
2. Բարձողների օգնական 6 կարգ
3. Մուրճահար 5 կարգ
4. Կանոնավորող 4–5 կարգ
5. Կարբիտ տեսակավորողներ
6. Երեքարառ լցնողներ 4 կարգ
7. Կիր մատակարարողներ 4 կարգ
8. Սեվագործ բանվորներ 3–4 կարգ
9. Կոտելշչիկներ 7 կարգ
10. Կոտելշչիկների օգնականներ 4–5 կարգ
11. Դարբիններ 7–8 կարգ
12. Փականագործ 7–9 կարգ
13. Փականագործի օգնականներ 4–5 կարգ
14. Դարբնի մուրճահար 3–4 կարգ
15. Թիթեղագործներ 6–8 կարգ
16. Պահեստի բանվորներ 5–6 կարգ
17. Կրի վառարանի վարպետ

18. Կրի վառարանի վարպետի օգնականներ 5–6 կարգ
19. Կրի վառարանի բանվորներ 4–5 կարգ
20. Բրույերի բանվորներ 3–5 կարգ
21 Հյուսն 5–6 կարգ

ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ
ԳՈՐԾԱՐԿՈՒ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԲԻՏ ԳՈՐԾԱՐԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ԽՈՒՐԱՑՆՑՅԱՆ

Публ. Библиот...
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր 1176 Գլավլիտ. 6229 Տիրաժ 160

ՀՀ Ազգային գրադարան
NL0060385